ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/11

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), քննելով «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից 13.06.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/11 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 13.06.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իրային միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հայտ է ներկայացրել նաև «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2017թ. տեղի ունեցած նիստի՝

- 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն:

- 4.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.05.2017թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների գնման «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված և Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-Ձեր կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրի, առևտրային ապրանքագրի թարգմանությունը պետք է վավերացվի նոտարական կարգով և առևտրային ապրանքագիրը պետք է հաստատված լինի երկկողմանի: Միաժամանակ բացակայում է պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթուղթը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետը՝ անհրաժեշտ է նույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները»:

«ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության և «Ուոնթրավել Ինդաստրի» ԲԲԸ-ի միջև 15.06.2016թ. կնքված թիվ HY-1641048 առուվաճառքի պայմանագրի, թիվ 002195 առևտրային ապրանքագրի, «Ուոնթրավել Ինդաստրի» ԲԲԸ-ի կողմից 09.05.2017թ. տրված նամակ-երաշխավորագրի թարգմանությունները, որոնք հաստատված են եղել թարգմանչական և համակարգչային ծառայություններ իրականացնող անհատ ձեռնարկատեր Գայանե Նահապետյանի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և որպես

անհամապատասխանության համառոտ նկարագրություն նշվել է հետևյալը՝ «սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանությունների շտկում, սակայն հանձնաժողովը չի ընդունել շտկումները, ուստի մերժել է հայտը»:

Ընկերությունը բողոքով վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, որի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Նույն Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-

ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի հրավերի 2-րդ բաժնի (2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ) 2.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և որպես անհամապատասխանության համառոտ նկարագրություն նշվել է հետևյալը՝ սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանությունների շտկում, սակայն հանձնաժողովը չի ընդունել շտկումներ, ուստի մերժել է հայտը:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան հայտի մերժման դեպքում պետք է պարունակեր հայտի մերժման հիմնավորումը, իսկ Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների հիմնավորվածության համար:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, առանց հայտի մերժման պատշաճ հիմնավորման՝ որոշել է մերժել «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը:

Բացի այդ, Ընկերության կողմից սամանված ժամկետում (ինչը վկայում է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը) ներկայացվել է անհամապատասխանություններ շտկում, ինչը ըստ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի՝ լիովին բավարար էր Ընկերության հայտը հրավերի պահանջներին համապատասխանող և ընտրված մասնակից ճանաչելու համար:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրած այն անհամապատասխանությանը, որ նմանատիպ պայմանագիրը և առևտրային ապրանքագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, ապա Ընկերությունը բողոքով հայտնել է, որ նման պահանջը խտրական է և հակասում է ինչպես հրավերով, այնպես էլ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Մասնավորապես, Ընթացակարգի հրավերով չի պահանջվել ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված թարգմանությամբ փաստաթուղթ, իսկ Ընկերությունը ներկայացրել է պահանջված փաստաթղթերի թարգմանությունները, որոնք հաստատված են եղել թարգմանչական և համակարգչային ծառայություններ իրականացնող անհատ ձեռնարկատեր Գայանե Նահապետյանի կողմից: Այսինքն տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտի հանդեպ առաջադրվել են հրավերով չնախատեսված պայմաններ, դրա հիման վրա հայտը մերժվել է, որի արդյունքում, ըստ Ընկերության, կոպտորեն խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի պահանջները: Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.3-րդ կետի համաձայն՝ միայն հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները, մինչդեռ մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթերը, ըստ նույն Հրավերի, ներկայացվում են պատճենների տեսքով, ուստի և նոտարական վավերացում չեն պահանջում և Հրավերի 2-րդ մասի 3.3-րդ կետի պահանջները չեն կարող տարածվել պայմանագրի և առևտրային ապրանքագրերի վրա:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրած այն անհամապատասխանությանը, որ առևտրային ապրանքագիրը պետք է հաստատված լինի երկկողմանի, ապա Ընկերությունը նշել է, որ ՀՀ կառավարության 25.08.1998թ. «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները

սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» թիվ 525-Ն որոշմամբ հաստատված «Նյութական ու ոչ նյութական ակտիվների, ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազմման» կարգի 1-ին կետի համաձայն՝ ծախսերի հաշվեգրման համար նյութական և ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ժամանակ իրականացված գործարքները հավաստող փաստաթղթեր կարող են համարվել, մասնավորապես՝

ա) հարկային հաշիվը.

բ) հաշիվ-ապրանքագիրը.

գ) կրճատ հաշիվ-ապրանքագիրը.

դ) ապրանքանյութական բեռնագիրը.

ե) պահեստի ելքի անդորրագիրը (ապրանքագիրը).

զ) կատարողական ակտը.

է) աշխատավարձի հաշվարկային կամ հաշվարկավճարային տեղեկագիրը.

ը) քարտային անդորրագիրը.

թ) բանկային ծառայությունների մատուցումը հավաստող անդորրագիրը կամ քաղվածքը կամ այլ փաստաթուղթ.

ժ) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված՝ վճարների կատարումը հավաստող փաստաթղթերը.

ժա) հսկիչ-դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) կտրոնը.

ժբ) միակողմանի գնման ակտը:

Նույն կարգի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝

2. Հաշվարկային փաստաթուղթը հարկ վճարողի իրականացրած գործարքը հաստատող՝ հարկման հիմք հանդիսացող (ծախսերը հիմնավորող) հաշվարկային փաստաթուղթ է, որում արտացոլված են (ներառված են ըստ էության) հետևյալ վավերապայմանները՝

ա) հաշվարկային փաստաթղթի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը.

բ) ակտիվներ օտարող կամ ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) հարկ վճարողի՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ) ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ ՀՎՀՀ,

- իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը,

- ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (զինվորական գրքույկի, սոցիալական քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական գրանցման վկայականի համարը.

գ) ակտիվներ ձեռք բերող կամ ծառայություններ ստացող (աշխատանքներ ընդունող) հարկ վճարողի՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում ՀՎՀՀ ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ ՀՎՀՀ,

- իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը,

- ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (զինվորական գրքույկի, սոցիալական քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական գրանցման վկայականի համարը.

դ) ակտիվների անվանացանկն ու քանակը և (կամ) ծառայությունների տեսակն ու ծավալը,

ե) ակտիվների միավորի գինը՝ դրա առանձնացումը հնարավոր լինելու դեպքում և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը:

3. Սույն կարգի 2-րդ կետի «բ», «գ», «դ» և «ե» ենթակետերի որոշ վավերապայմաններ հաշվարկային փաստաթղթում արտացոլված չլինելու դեպքում այդ ենթակետերի պահանջները համարվում են բավարարված, եթե՝

- առկա է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքված գրավոր պայմանագիր, որում արտացոլված են այդ վավերապայմանները, իսկ հաշվարկային փաստաթղթում առկա է հատուցման ենթակա ընդհանուր գումարը, գործարքն իրականացրած հարկ վճարողների լիազորված անձանց պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունն ու ստորագրությունը և կատարված է հղում պայմանագրի ամսաթվին.
- գործարքն իրականացվում է լիազորագրի (տեղեկանքի) հիման վրա (առանց կողմերի միջև գրավոր պայմանագրի կնքման), որում արտացոլված են՝
- ակտիվներ վաճառող (տրամադրող) իրավաբանական անձի (իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության) կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝
- իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը.
- ակտիվներ վաճառող (տրամադրող) ֆիզիկական անձի կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝
- ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (զինվորական գրքույկի, սոցիալական քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական գրանցման վկայականի համարը.

- ակտիվներ ձեռք բերող (ստացող) իրավաբանական անձի (իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության) կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝
- իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը.
- ակտիվներ ձեռք բերող (ստացող) ֆիզիկական անձի կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝
- ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (զինվորական գրքույկի, սոցիալական քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական գրանցման վկայականի համարը:
- Կազմվող հաշվարկային փաստաթղթում պարտադիր ներառվում են սույն կարգի 2-րդ կետում նշված մնացած վավերապայմանները, ինչպես նաև հղումը լիազորագրին (տեղեկանքին) և լիազորված ֆիզիկական անձի անունը (անվան սկզբնատառը), ազգանունն ու ստորագրությունը:

Ընկերությունը գտնում է, որ վերոհիշյալ նորմի վերլուծությունից երևում է, որ առևտրային ապրանքագրի երկկողմանի ստորագրված լինելու պահանջ ուղղակիորեն նախատեսված չէ, ավելին, ըստ նույն կարգի 3-րդ կետի, կարգի 2-րդ կետի «բ», «գ», «դ» և «ե» ենթակետերի որոշ վավերապայմաններ հաշվարկային փաստաթղթում արտացոլված չլինելու դեպքում այդ ենթակետերի պահանջները նույնպես համարվում են բավարարված: Ընկերության կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «Ուտնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի կողմից 09.05.2017թ. տրված նամակ-երաշխավորագիրը, որը հաստատում է, որ 15.06.2016թ. N HY-1641048 պայմանագրի և N 002195 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ ԲԲԸ-ն գնել է 14 և 16 տեղանոց վրաններ, որոնք եղել են բարձր որակի և մատակարարվել են առանց ուշացումների, ինչը ներկայացված առևտրային

ապրանքագրերի հետ համակցության մեջ ապացուցում են, որ վկայակոչված գործարքը իրականացվել է:

Այսպիսով՝ Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողքարկման խորհրդին խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ցանկացած գործողության իրականացումը, որոշումների կայացումը, որը Խորհրդի կողմից 16.06.2017թ. կայացված միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները:

3. Պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 10:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 23.06.2017թ. թիվ ԴՎԱ/1945 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով հայտարարված վրանների ձեռքբերման ընթացակարգին համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության հայտ է ներկայացրել «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն և 2 չափաբաժինների մասով հայտարարվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

«ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Որպես մասնագիտական փորձառության որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել է «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով հանդես եկող մեկ այլ արտերկրյա (Չինական) կազմակերպության միջև կնքված մատակարարման պայմանագիր: Պայմանագիրը և կից փաստաթղթերը ներկայացված են եղել անգլերեն և թարգմանված հայերեն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից, մասնակցի ներկայացրած պայմանագրի հավաստիությունը ճշտելու համար, պահանջվել է շտկում՝ ներկայացված փաստաթղթերի թարգմանության հաստատում նոտարական կարգով, համաձայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և նույն օրենքի 68-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների, ինչպես նաև պայմանագրի կատարումը հավաստող առևտրային ապրանքագրի երկկողմանի վավերացում:

Հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերությանը ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

«ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում պահանջվող շտկումները չեն ներկայացվել, այլ էլեկտրոնային եղանակով ներկայացվել են մի շարք պատճառաբանություններ՝ շտկումները չներկայացնելու վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, Ընկերության հայտը մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 10:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը փորձել է ստուգել Ընկերության կողմից ներկայացված պայմանագրի հավաստիությունը այդ նպատակով դիմելով տարբեր մարմինների, սակայն հաշվի առնելով, որ նշված պայմանագիրը կնքված է երկու արտասահմանյան կազմակերպությունների միջև, ուստի ՀՀ ներպետական որևէ կառույց որևէ տեղեկատվություն չի կարողացել տրամադրել: Ուստի Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովը գտել է, որ անհրաժեշտ է պահանջել պայմանագրի նոտարական կարգով վավերացված թարգմանությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի և «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ՍՊԸ-ի կոնսորցիումն հայտ է ներկայացրել:

2. Կոնսորցիումի հայտի թիվ 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պաշտաճ ձևով իրականացրել է Վաճառքի պայմանագիր N ՀԸ-161048 առ 15.06.2016թ., որի ընդհանուր արժեքը կազմել է 72 600 000 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի և «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ՍՊԸ-ի կոնսորցիումն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-2-րդ չափաբաժինների մասով և վերջինիս սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Կոնսորցիումի կողմից, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է

«Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության (հասցե՝ 677 Նաթան Ռոադ Մոնգկոկ, Հոնգ Կոնգ) և «Ուոնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի (հասցե՝ NO.1, Յուանշանզայ Ռոադ, Հենգգանգթոու, Սինան շրջան, Չանան Թաուն, քաղաք Դունգուան, Չինաստան) միջև 15.06.2016թ. կնքված 150 232 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ վրանների մատակարարման թիվ HY-161048 պայմանագրի և առևտրային ապրանքագրի՝ անգլերենից հայերեն թարգմանված օրինակները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «ԼՈՒԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրի, առևտրային ապրանքագրի թարգմանությունը պետք է վավերացվի նոտարական կարգով և առևտրային ապրանքագիրը պետք է հաստատված լինի երկկողմանի: Միաժամանակ բացակայում է պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթուղթը:

6. Հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձաժողովի քարտուղարը 06.05.2017թ. ծանուցել է «ԼՈՒԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով շտկել անհամապատասխանությունը:

7. «ԼՈՒԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության (հասցե՝ 677 Նաթան Ռոադ Մոնգկոկ, Հոնգ Կոնգ) և «Ուոնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի (հասցե՝ NO.1, Յուանշանզայ Ռոադ, Հենգգանգթոու, Սինան շրջան, Չանան Թաուն, քաղաք Դունգուան, Չինաստան) միջև 15.06.2016թ. կնքված 150 232 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ վրանների մատակարարման թիվ HY-161048 պայմանագրի, առևտրային ապրանքագրի, ինչպես նաև «Ուոնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի կողմից տրված՝ «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության կողմից Պայմանագիրը պատշաճ կատարելու վերաբերյալ նամակ-երաշխավորագրի՝ անգլերենից հայերեն թարգմանված օրինակները՝ հաստատված թարգմանչական և համակարգչային ծառայություններ իրականացնող անհատ ձեռնարկատեր Գայանե Նահապետյանի կողմից:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը՝ պատճառաբանելով, որ սահմանված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է անհամապատասխանության շտկումները, սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, քանի որ Ընկերության կողմից չի ներկայացվել նմանատիպ պայմանագրի, առևտրային ապրանքագրի թարգմանությունը նոտարական վավերացման կարգով և առևտրային ապրանքագիրը հաստատված չի եղել երկկողմանի:

4.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի 13.06.2017թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.06.2017թ. թիվ ԴՎԱ/1945 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

<< կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2)...».

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով

ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի և «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ՍՊԸ-ի կոնսորցիումն հայտ է ներկայացրել:

Կոնսորցիումի հայտի թիվ 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պաշտաճ ձևով իրականացրել է Վաճառքի պայմանագիր N ՀԸ-161048 առ 15.06.2016թ., որի ընդհանուր արժեքը կազմել է 72 600 000 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կոնսորցիումի կողմից, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության (հասցե՝ 677 Նաթան Ռոադ Մոնգկոկ, Հոնգ Կոնգ) և «Ուոնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի (հասցե՝ NO.1, Յուանշանզայ Ռոադ, Հենգգանգթոու, Սինան շրջան, Չանան Թաուն, քաղաք Դունգուան, Չինաստան) միջև 15.06.2016թ. կնքված 150 232 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ վրանների մատակարարման թիվ HY-161048 պայմանագրի և առևտրային ապրանքագրի՝ անգլերենից հայերեն թարգմանված օրինակները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ. մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրի, առևտրային ապրանքագրի թարգմանությունը պետք է վավերացվի նոտարական կարգով և առևտրային ապրանքագիրը պետք է հաստատված լինի երկկողմանի: Միաժամանակ բացակայում է պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթուղթը: Ուստի Ընթացակարգի գնահատող հանձաժողովի քարտուղարը ծանուցել է «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով շտկել անհամապատասխանությունը:

«ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության (հասցե՝ 677 Նաթան Ռոադ Մոնգկոկ, Հոնգ Կոնգ) և «Ուոնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի (հասցե՝ NO.1, Յուանշանզայ Ռոադ, Հենգգանգթոու, Սինան շրջան, Չանան Թաուն, քաղաք Դունգուան, Չինաստան) միջև 15.06.2016թ. կնքված 150 232 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ վրանների մատակարարման թիվ HY-161048 պայմանագրի, առևտրային ապրանքագրի, ինչպես նաև «Ուոնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի կողմից տրված՝ «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության կողմից Պայմանագիրը պատշաճ կատարելու վերաբերյալ նամակ-երաշխավորագրի՝ անգլերենից հայերեն թարգմանված օրինակները՝ հաստատված թարգմանչական և համակարգչային ծառայություններ իրականացնող անհատ ձեռնարկատեր Գայանե Նահապետյանի կողմից:

Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 10.05.2017թ. թիվ 10/17 գրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ միջազգային առևտրի շրջանակներում արտահանման դեպքում, հաշիվ-ապրանքագրերը չեն հաստատվում երկկողմանի և հանձնման-ընդունման ակտ հասկացողություն կամ նման փաստաթուղթ ևս չի օգտագործվում: Միևնույն ժամանակ Ընկերության խնդրանքի հիման վրա Ընկերության գործընկերը տրամադրել է պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող տեղեկանք, որը կից ներկայացվել է:

Ինչ վերաբերում է ներկայացված փաստաթղթերի թարգմանության նոտարական վավերացման վերաբերյալ պահանջին, ապա Ընկերությունը հայտնել է, որ դիմել է նոտարական գրասենյակ և ստացել մերժում, քանի որ պահանջվում է այդ փաստաթղթերի բնօրինակները, որպեսզի դրանք ստանան նոտարական վավերացում: Հաշվի առնելով վերոգրյալը, արդեն իսկ իրատեսական չէ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ունենալ այդ փաստաթղթերի բնօրինակները և այն վավերացնել նոտարական կարգով, այն դեպքում, երբ ոչ հրավերի, ոչ էլ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ այդպիսի պահանջ չի նախատեսվում:

Նշված գրությամբ Ընկերությունը հայտնել է նաև, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը թարգմանվել են նոտարական գրասենյակում գործող, թարգմանչական

ծառայություններ մատուցող թարգմանչի կողմից: Հնարավոր է եղել միայն նշված փաստաթղթերը հաստատել թարգմանչական ծառայություններ մատուցող թարգմանչի կնիքով, որը և վկայում է փաստաթղթերի պատշաճ թարգմանության վերաբերյալ, որոնք կից ներկայացվել են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 1.1 կետով կայացված որոշմամբ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Խորհուրդը գտնում է, որ մերժելով «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ նոտարը վավերացնում է փաստաթղթերի թարգմանության իսկությունը: Նույն հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն՝ նոտարը վավերացնում է իր վստահած թարգմանչի ստորագրության իսկությունը:

Նույն Օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նոտարը վավերացնում է փաստաթղթի թարգմանության իսկությունը, եթե նա տիրապետում է համապատասխան լեզուներին: Եթե նա չի տիրապետում համապատասխան լեզուներին, փաստաթուղթը թարգմանում է նոտարի կողմից վստահված թարգմանիչը, որի ստորագրության իսկությունը վավերացնում է նոտարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոտարը, վավերացնելով թարգմանության իսկությունը կամ թարգմանչի ստորագրության իսկությունը, չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ ***փաստաթղթի թարգմանության բովանդակությունը համապատասխանում է նրա բնօրինակի բովանդակությանը:***

Կարգի 71-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն:

Այսպիսով Կարգի վերը նշված կետը ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հնարավորություն է տալիս ստուգելու մասնակցի կողմից ներկայացրած տվյալների իսկությունը օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալները կամ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու հնարավորությունը: Միևինույն ժամանակ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի և «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության կոնսորցիումի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ի սկզբանե ներկայացվել է երկու արտասահմանյան առևտրային կազմակերպությունների՝ տվյալ դեպքում «Հուան Յուան Էլ Տեքնոլոջի Քո» ընկերության (հասցե՝ 677 Նաթան Ռոադ Մոնգկոկ, Հոնգ Կոնգ) և «Ուոնթրավել ինդասթրի» ԲԲԸ-ի (հասցե՝ NO.1, Յուանշանզայ Ռոադ, Հենգգանգթոու, Սինան շրջան, Չանան Թաուն, քաղաք Դունգուան, Չինաստան) միջև 15.06.2016թ. կնքված 150 232 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ վրանների մատակարարման թիվ HY-161048 պայմանագիրը և դրան կից առևտրային ապրանքագիրը՝ դրանց հայերեն թարգմանված տարբերակով:

Տվյալ պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել Կարգի 71-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել համապատասխան հարցումներ, այն պատճառով, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը և առևտրային ապրանքագիրը իրականացվել է երկու օտարերկրյա կազմակերպությունների միջև և Հայաստանի Հանրապետության ներպետական որևէ կառույց օբյեկտիվորեն չի տիրապետում համապատասխան տեղեկատվության պայմանագրի իսկության վերաբերյալ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավաչափորեն պահանջել է Ընկերությունից ներկայացնել հիշյալ փաստաթղթերի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանված օրինակները:

Նման իրավիճակում Խորհուրդը գտնում է, որ ներկայացված պայմանագրի և առևտրային ապրանքագրի թարգմանության՝ նոտարական կարգով վավերացված լինելու՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առաջադրված պահանջն անհրաժեշտ էր դրանց թարգմանված օրինակների՝ բնօրինակ փաստաթղթերի բովանդակությանը համապատասխան լինելու փաստը հավաստելու համար, ինչն

անհրաժեշտ է ներկայացված փաստաթղթերի իսկությունը ստուգելու համար: Մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված պամանագրի, առևտրային ապրանքագրի և նամակ-երաշխավորագրի համապատասխան թարգմանությունը իրականացվել է ոչ թե բնօրինակ փաստաթղթից, այլ օգտագործելով դրանց պատճեն տարբերակը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված թիվ 10/17 գրությամբ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն հայտնել է, որ նոտարական գրասենյակի կողմից մերժվել է փաստաթղթերի թարգմանությունների նոտարական վավերացումը, քանի որ պահանջվել է այդ փաստաթղթերի բնօրինակները, որոնց Ընկերությունը չի տիրապետում:

Կարգի 70-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Տվյալ պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 71-րդ կետի շրջանակներում առաջադրվել է կոնսորցիումի՝ հրավերով նախատեսված մասնագիտական փորձառության չափանիշին համապատասխանությունը հիմնավորելու պահանջ, որը Խորհուրդը դիտարկում է որպես օբյեկտիվորեն հիմնավորված, հաշվի առնելով Կարգի 71-րդ կետով նախատեսված՝ մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու գնահատող հանձնաժողովի լիազորությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, որի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն և գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը, ապա Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պահպանվել են Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները, քանի որ Ընկերության հայտը մերժելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման մեջ հստակ նշվել է հայտի մերժման հիմնավորումը: Մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ն ներկայացրել է անհամապատասխանության շտկումները,

սակայն Ընկերության հայտը մերժվել է այն պատճառով, որ Ընկերության կողմից չի ներկայացվել նմանատիպ պայմանագրի, առևտրային ապրանքագրի թարգմանությունը նոտարական վավերացման կարգով:

Հետևաբար, Խորհուրդն արձանագրում է, որ «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ հայտը մերժելու վերաբերյալ դրույթի հետ մեկտեղ պարունակում է նաև մերժման հիմնավորումը, ինչը և պահանջվում է Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, հետևաբար «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի կողմից 13.06.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**